




Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ՏՊԱՐԱՆԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՐԿՈՒՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԸ

Այս տարի լրացավ Մայր Աթոռի՝ Հայաստանում առաջին հայ տպարանի հաստատման 200-ամյակը:

Պատմական ու հիշարժան այս տարեդարձի առթիվ գրված հունվար 28 թվակիր հայրապետական կոնդակը, վեր հանելով մշակութային այդ մեծ ձեռնարկի պատմական նշանակությունը մեր ազգային-եկեղեցական տարեգրության մեջ, 1972 թվականը հայտարարում էր հոբելյանական տարի և հրահանգում էր բոլոր հայ եկեղեցիներում և պատարագի մատուցմամբ և քարոզներով ոգեկոչել Հայաստանում առաջին հայերեն տպարանը հաստատող Սիմեոն Երևանցի մեծագործ կաթողիկոսի (1768—1780) պայծառ անունն ու փառավոր հիշատակը:

Հայրապետական հրահանգի համաձայն Մայր Աթոռում ևս նույններ 4—5 օրերին կատարվեցին հոբելյանական հանդիսություններ (տես «Էջմիածին», 1972, № 11, էջ 34):

Սիմեոն Երևանցու օրով, 1771 թվականին, ս. Էջմիածնում տպարանի հաստատումը, տպարան, որը կանոնավորապես սկսում էր գործել 1772 թվականից մինչև 1919 թվականը, որպես հայ ժողովրդի հոգևոր լուսավորության և ազգային-մշակութային զարթոնքի հիմնական ազդակներից մեկը, հանդիսանում էր մեծ երևույթ ժԸ դարի մեր ժողովրդի պատմության մեջ:

Հայ տպագրությունը ս. սահակ-մեսրոպյան հոգևոր-մշակութային ու հայրենասիրական հայապահպանման հրաշքի շարունակությունն էր մեսրոպատառ տպագրված հայ գրի ու գրականության միջոցով:

Հայ ժողովուրդն առաջիններից մեկն էր հանդիսանում, որ գոտենիերգյան մեծ գյուտից շուրջ 50 տարի հետո, 1512 թվականին, տիրանում էր տպագրական արվեստի հրաշալիքին՝ սկիզբ դնելով տպագրության:

Հայ ժողովուրդն այս ուղղությամբ առաջավոր էր հանդիսանում մի շարք եվրոպական երկրներից և իրեն շրջապատող բոլոր ազգերից:

Իրանում պարսկերեն առաջին գիրքը տպագրվել է 1830 թվականին, երբ նույն Իրանում, Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքում, Մայր Աթոռի միաբանները տպարան են հիմնել և գրքեր են տպագրել 1640 թվականին:

Թուրքիայում առաջին տպագիր գիրքը թուրքերեն լեզվով լույս է տեսել 1729 թվականին, այն դեպքում, երբ Միքայել Ա Սեբաստացի կաթողիկոսի հրահանգով Արգար Եփրեմյանցին 1562 թվականին Կ. Պոլսում տպագրում էր առաջին հայերեն գիրքը:

Սովետական Միության ժողովուրդների շարքում ևս հայ ժողովրդին է պատկանում հնագույն տպագրության պատիվը:

ԺԶ և ԺԷ դարերում մեր երկրում տիրող քաղաքական-տնտեսական ծանր պայմանների թերմով հայերեն առաջին տպարանները բացվում էին հայկական գաղթօջախներում, ս. Էջմիածնի հովանավորությամբ և նախաձեռնությամբ: Այդ տպարանները կոչվում էին ս. Էջմիածնի և ս. Գրիգոր Լուսավորչի տպարաններ:

Հայրենի հողի վրա, ս. Էջմիածնում, տպարան հաստատելու իղձը, երազանքը զբաղեցրել են միշտ բազում լուսամիտ կաթողի-

կոսների և Մայր Աթոռի կրթանվեր միաբանների միտքն ու ուշադրությունը:

«Այս ուղղությամբ գործադրված ճիգերը ժԷ դարի հայկական առաջադիմական շարժման պանծալի էջերն են կազմում» (Լեո):

Հայաստանում առաջին հայ տպարանի հաստատումը պատմականորեն կապվում է Սիմեոն Երևանցի կաթողիկոսի անվան ու գործունեության հետ:

Երևանցին իր սարկավագության առաջին իսկ օրից մտածել է Մայր Աթոռում տպարան բացելու մասին:

Վերջապես, երկարատև ու եռանդագին նախապատրաստական համառ աշխատանքներից հետո, 1771 թվականին, Սիմեոն Երևանցի կաթողիկոսին հաջողվում է հայրենի հողի վրա, Մայր Աթոռում, հաստատել տպարան:

Երևանցին արժանավորապես հանդիսանում է հայաստանյան տպագրության նահապետը:

Հայ տպագրությունը 260 տարի (1512—1772) գաղթօջախներում «պանդուխտ» մնալուց հետո, վերջապես հայրենադարձվում է Հայոց աշխարհ:

Այս գործում Երևանցուն մեծապես օգնում են Մայր Աթոռի բազում միաբաններ, որոնց թվում Հարություն եպս. Էջմիածնեցին, Մրկերտիչ եպս. Շոտթեցին և ուրիշներ: Մայր Աթոռի շնորհալի միաբաններն էին, որ պատրաստում էին տպագրական տառերը, գարդագրերը, բացել էին ձուլարան: Միաբաններն էին միաժամանակ առաջին գրաշարներն ու սրբագրիչները, տպագրիչներն ու կազմարարները:

Հայ տպարանի հաստատումը Մայր Աթոռում ժամանակի աննպաստ պայմաններում հայրապետական մեծագործություն էր (Մաղ. արքեպ. Օրմանյան), փառավոր մի գործ, որի նմանը մինչև այդ էջմիածնում չէր եղել (Արտակ արքեպ.):

Մայր Աթոռում առաջին հայ տպարանի հաստատումը և այս 1776 թվականին թղթագործարանի շինությունը հնարավոր են դառնում իշխանական նվիրատվությամբ և արդեամբ ջուղայեցի ի Հինդ բնակեալ բարեպաշտօն Գրիգոր աղային Խոջաջանեան, որ մականունաբ Զաքիկենց կոչի:

«Այստեղ արդեն լիովի արտահայտվում է Սիմեոն կաթողիկոսի խիզախ, ձեռնարկող ոգին, կամքի ուժը, վառ սերը դեպի կուլտուրական հիմնարկությունները» (Լեո):

Երևանցին, հակառակ ժամանակի դաժան և աննպաստ պայմաններին, կատարել է նաև փառավոր մեծածախ և ծավալուն շինարարություններ թե՛ վասն հասարակու-

թեան օգտի և թե՛ յառկապես վասն սրբոյ Աթոռոյս:

Սիմեոն Երևանցին թողել է նաև հարուստ մատենագրական վաստակ, որի գաղափարական բովանդակությունը էջմիածնասիրությունն է և հայրենասիրությունը:

Երևանցին հանդիսանում է նաև ժԷ դարի մեր ազգային-ազատագրական շարժման բացառիկ դեմքերից մեկը: Նա եկեղեցական, հայրենասիրական նպատակներով սերտ կապ է հաստատում ռուսական արքունիքի հետ և 1766 թվականի օգոստոսի 1-ին «գրեաց զթուղթ» աղերսանաց առ աստուածագոր կաշարոհին Ռուսաց Եկատերինէ»: Երևանցուն գրած իր պատասխան հրովարտակում, 1768 թվականի հուլիսի 20-ին, կայսրրոհին «հայոց հավատարիմ ազգը» առնում է իր հատուկ «ողորմութեան և հովանաւորութեան և շնորհաց ներքոյ» և հավաստում է Ռուսաստանի «մշտաւոն ողորմութիւնն ու շնորհաց շարունակությունը» հայ ժողովրդի նկատմամբ:

Երևանցին այս առիթով, ի նշան երախտագիտության դէպի Ռուսաստանը, սահմանում է կաշտերական մասնավոր մաղթանք՝ շարադրելով Գիրք հանդիսութեանց տօնից կայսերականաց, 1771 թվի հուլիսի 10-ին՝ նշելով, որ կաշարոհու հովանաւորութեամբ ազգս մեր կեայ յաւապես և պահպանութեամբ նորին կենցաղավարի ապահով և աներկիւղ յամենայն թշնամեաց: Կայսերական այս մաղթանքը անխափան կատարվում է մինչև 1917 թվականի փետրվար ափսը:

Սիմեոն Երևանցու կյանքին և գործունեությանն է նվիրված «Էջմիածին» ամսագրի սույն բացառիկը:

Երևանցին իր պայծառ կյանքով, հայրենասիրական եռանդագին ու քեղուն գործունեությամբ և մատենագրական վաստակով հանդիսանում է ժԷ դարի մեր ազգային-եկեղեցական տարեգրության մեջ ամենայն իրավունքով ամենախոշոր անձնավորությունը (Լեո), այն վեհ և ընտիր հոգիներեն մին, որ իրենց արթուն մտքով, լուրջ ջանքերով և անխոնջ աշխատասիրությամբ տիպար գործիչը կկազմեն և իրենց ժամանակի տիրապետող դեմքը կդառնան (Մաղ. արքեպ. Օրմանյան):

Երևանցին մեր ժամանակակիցն է իր լուսամիտ, կրթանվեր ու հայրենասիրական գործունեությամբ և մտորումներով, որպես Հայոց Հայրապետ ու ճշմարտապես իրավ հայ մարդ:

«Երանի մեռելոցն, որք ի Տէր ննջեցին, զի գործք իրեանց չոգան զհետ նոցա» (Յայտ. ԺԴ. 18):